



**ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՆԹԻՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՎԵՆԻ
ԱՆՎԱՆԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱՐՈՒՐՈՒՄ**

Փետրվարի 28-ն է, Հինգշաբթի: Այսօր մեր ազգային-եկեղեցական ամենամեծ տոներից մեկն է՝ «Մրցոց Վարդանանց զօրավարաց» մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին։ Ժամը 11-ին սկսվում է պանծալի նահատակների սուրբ հիշատակին նվիրված հանդիսավոր պատարագը։ Չնայած այս տարվա արտասովոր ձյունին, բազմաթիվ ուստավորներ էին եկել բավական հեռու վայրերից։ Զանգերի զվարթ հնչումների տակ, եկեղեցական թափորով, Վեհափառ Հայրապետը Վեհարանից իշնում է Մայր Տաճար, ուր սուրբ պատարագ է մատուցում գերաշնորհ Տ. Մահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Շեմարանի երգչախոսմբը դաշնորհն երգում է սուրբ պատարագը։ Մայր Տաճարը զարդարված է տոնականորեն։ Օրվա մեծ տոնի և նրա նշանակության մասին «Հայր մեր»-ից առաջ քարոզում է հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ալեքսիսյանը՝ «Մահ ու իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» բնաբանով։ Քարոզիլ հանգամանորեն կանտ է առնում Վարդանանց պատերազմի զիսավոր դեպքերի, նրա հաղթական ելքը որոշող բարոյա-քաղաքական, մշակութային և մյուս ազդակների ու մեր ժողովրդի պատմության մեջ նրա խաղացած մեծ և կարևոր դերի վրա։

Քարոզից հետո նորին Ա. Օծություն Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվում է հոգեհանգիստ պաման համօրէն ննջեցելոց։

Մրցոց Վարդանանց օրը տոնն էր նաև Նորին Ա. Օծություն Վեհափառ Հայրապետի անվանակուլության։

Հանդիսավոր պատարագի վերջում, իշման Ա. Սեղանի առջև, Մայր Տաճարի պատմական կամարների տակ, մի անգամ ևս հնեցին Մայր Աթոռի հավերժության և անսասնության ու նրա Գահակալ Վազգեն Ա-ի կրանքի և արևշատության նվիրված սրտագին աղոթքներ և շարականներ։

Հայրապետական մաղթանքից հետո, Մայր Տաճարում ներկա եղող բոլոր հավատացյալները, մեծ թե փոքր, երիտասարդներ թե աղջկներ, ակնածանութ համբուրելով Վեհափառ Հայրապետի Ա. Աջը, շնորհավորեցին նրա անվանակուլության տոնը։

Այսուհետև շարականով, խնկով ու աղոթքով Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվեց Վեհարանի Մաղլյա գահին, ուր բարձրացավ Հայրապետական Գահի վրա։ Իր անվան տոնի առթիվ, հանուն Մայր Աթոռի միաբանության, Շեմարանի և վանքի պաշտոնեության, Վեհափառ Հայրապետին շնորհավորեց գերաշնորհ Տ. Մահակ արքեպիսկոպոսը։

Արտահայտելով իր խոր զգացվածությունը, Վեհափառ Հայրապետն ասաց.

«Այսօր Հայաստանյաց եկեղեցվոր բալոր սուրբ սեղանեներն չերմագին աղոթքներ կրածրանան առ Աստված՝ Ա. Վարդանանց հանատակաց նովկաց հանգստյան համար։

Այսօր մեր բոլոր եկեղեցիներու զանգակները հորիզոնն է հորիզոն կավետեն միաժամանակ, որ այն սուրբ հավատքը, որում համար շողաց Կարմիր Վարդանի սուրբ, և այն աշխարհը, որ Մամիկոնյաններու և անեց գենի ընկերներուն վարդագույն արյամբ ներկվեցալ, կենդանի են ու կանգում: Կենդանի են ու հանգուն Եկեղեցին Հայկական և Մայր Արք Ս. Էջմիածինը, կենդանի են ու կանգուն ճայ ժողովուրդը և մեր վերածնած Հայրենիքը՝ Սովետական Մայր Հայաստանը:

Ներհակալ ենք Զեր շերհավորուրյուններուն և մաղրանեններուն համար: Ճիշտ է, թե այսօր Մեր անվանակոչուրյան տոնն է, քայլ Մենք հավաքված ենք այստեղ առավելապես, որպեսզի տոնենք ու պահեացնենք համեստ խնկելի հիշատակը «նորաերաշ պահատոր» վարդանաց բազմարտիկ հերաններու: Անոնք կամովին և արհարա և վիրեցին իրենց բոսր արյունը վկան հաւատոց և վասն Հայրենեաց»:

Ավարայր հայ հոգիի առաջին մեծ հակատամարտն է: Ավարայր հայոց պատմուրյան առաջնորդը ոգին դարձավ: Ավարայր և Վարդանանք հետագա բոլոր սերունդները ոգեշնչեցին և անխորտակելի ամրոցը հանդիսացան բոլոր անոնց, որոնք դարերու ընթացքին և մինչև մեր օրերը մաքանեցան Հայ Հայրենիքի պաշտպանուրյան և պատուրյան համար:

Ս. Ղենդյանց և Վարդանանց սուրբ եկատակր լավագույնս հարգած պիտի ըլլանք, երե մենք ևս ներշնչվինք իրենց կյանքի ներսական պատմուրյեննեն և նոյն ովտով և հվիրումով գործենք, շինենք, գորացնենք, շենցնենք ու ծաղկեցնենք մեր Եկեղեցին, ամենայն Հայոց Մայր Արք Ս. Էջմիածինը և Հայաստան աշխարհը:

Այսօ՛ր կտեսնենք Ավարայրեն շողացող պայծառ լուսը, որ հայոց պատմուրյան բազում տարիներու մշուշին ընդմեջնեն մեզի կհասնի՝ լուսավորելու համար մեր հանապահը: Լսենք ճակ Ս. Ղենդյանց և Վարդանանց պատգամը՝ Հայ ժողովուրդ, զինված և գրահամար Սահմականի Մստիկանի:

շունչ Ս. Գրեգով և Քաջն Վարդանի վահանավ, հատաշ: Հատաշ՝ հավատքով, միուրյամբ, նվիրումով:

Վեհափառ Հայրապետի անվանակոչության առնի առթիվ, ժամը 3-ին Վեհարանում տըրպից պաշտոնական ճաշկերուկիթ Հայրապետական սեղանին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգենոր Ճեմարանի դասախոսական կազմը, «Էջմիածին» ամսագիր խմբագրությունը և Մայր Աթոռի պաշտոնությունը:

Սեղանը բացվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով: Սեղանների շուրջ ստեղծվել էր տոնական ուրախ և խանդական տրամադրություն:

Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը շնորհավորեցին ներկաներից շատերը: Շնորհակալության և բարեմաղթության սրտագին խոսքեր արտասանեցին գերաշնորհ Տ. Եղնիկ Եպիսկոպոս Աղնավույանը և գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոս Տեր-Սահմականը, Հոգենորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը և Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը, բարեշնորհ Սարգիս Ասրիկավագ Բնեհրուդյանը, պ. Հմայակ Սեղմարյանը, պ. Արթուր Հատիսյանը և պ. Գեղամ Շահնյանը: Հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը, արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյանը և բարեշնորհ Խորեն սարկավագ Պալյանը իրենց քաղցր ճայներով և երգերով սեղանի շուրջ ստեղծեցին Հայրենասիրական խանդական մթնոլորտ:

Վերջում ծափերի տակ խոսք առավ Վեհափառ Հայրապետը և շնորհակալություն Հայտնեց իր անվանակոչության տոնի առթիվ Հայտնված անկեղծ և ջերմագին զգացմունքների և բարեմաղթությունների համար, օրհնեց բոլոր ներկաներին, Հայ Եկեղեցին, Հայրենի պետությունը և բովանդակ Ազգն Հայոց:

Ճաշկերուկիթը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիշ»-ով:

